ՀՈՒՅՍ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՐ

Նպատակ

Տրամադրել ֆինանսական և երկարաժամկետ շարունակական աջակցություն, որպեսզի ամրապնդել Հրազդանի հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված կենտրոնի կարողությունները, աջակցելով հաշմանդամություն ունեցող շուրջ 150 երեխայի, ովքեր ապրում են Հրազդանում և շրջակա գյուղերում:

Գործողություններ

- Հրազդանի և շրաջակա գյուղերի հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրել բարձրակարգ սոցիալական և առողջապահական խնամք, կրթական աջակցություն
- Մարզել տեղական կամավորներին և պրոֆեսիոնալներին, որոնք կտրամադրեն բավարար սոցիալական խնամք, ինչպիսիք են՝ ֆիզիոթերապիան, հոգեբանական թերապիան, խոսքի և արվեստի թերապիան, իրավական խորհրդատվությունը, ինչպես նաև օգնել իրականացնել և զարգացնել հատուկ մասնագիտական դասընթացներ:

Ծրագրի նկարագրությունը

Հրազդանի Երեխաների աջակցման կենտրոնը Հրազդանի և շրջակա գյուղերում ապրող հաշմանդամություն ունեցող երեխաներին ապահովում է կրթական, առողջապահական և սոցիալական խնամքով: ՀՀ կառավարությունը և Կոտայքի մարզպետարանը խրախուսում են կենտրոնի շարունակական գործունեությունը, քանի որ դրա գոյությունը շատ կարևոր է, սակայն պետական բյուջեում առկա ֆինանսները բավարար չեն դրամական աջակցության համար: Կենտրոնի կարիքները հոգալու համար, Հրազդանի քաղաքապետարանը կենտրոնին 10 տարվա ժամկետով տարածք է տրամադրել: Հայաստանում ԱՄՆ դեսպանության և այլ աջակիցների շնորհիվ կենտրոնը կարողացել է իրականացնել շենքի վերականգնողական և վերանորոգման աշխատանքները:

Կենտրոնի աշխատանքը շատ կարևոր է: Նրանք պետք է շարունակեն իրենց աշխատանքը 3-ից 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաներին ամենօրյա աջակցություն ցուցաբերելու գործում: Հաշմանդամություն ունեցողների սոցիալական խնդիրները հոգալու հարցում մարզերը այնքան էլ զարգացած չեն, ինչի արդյունքում նրանցից մեծ մասը չի ստանում համապատասխան աջակցություն, և հաշմանդամություն ունեցող թե՛ երեխաները, թե՛ մեծահասակները հաճախ մեկուսացված են իրենց համայնքից:

Հայաստանում ապրող հաշմանդամները կարիք ունեն կրթական աջակցության, որպեսզի սովորեն թե ինչպես ամբողջովին ներգրավված լինել համայնքում: Շատերը կարիք ունեն սովորելու այդ հմտությունները, որպեսզի կարողանան ազատ շփվել հանրության հետ: Որոշ հմտություններ ձեռք բերելով, նրանք կկարողանան դառնալ համայնքի ավելի ակտիվ մասնիկ եւ լինել ավելի անկախ:

Հրազդանի երեխաների աջակցման կենտրոնը կշարունակի աջակցել հաշմանդամություն ունեցող երեխաներին: Պրոֆեսիոնալ բժիշկները, ֆիզիոթերապևտները և սոցիալական աշխատողները կտրամադրեն հիմնական կրթության, ինտելեկտուալ խաղերի, ֆիզիկական կրթության, արվեստի և պարի դասընթացներ, ինչպես նաև կխրախուսեն ծնողներին: Կենտրոնի շատ սաներ նախկինում չեն հաճախել դպրոց, եւ այդ դասընթացները պարզապես անհրաժեշտ են նրանց ինտելեկտուալ զարգացման համար: Ֆիզիկական դասընթացներն էլ օգնում են երեխաներին անել բազում վարժություններ, որոնք հատկապես ձմռան ամիսներին հնարավոր չէ կատարել այլ վայրերում:

Անցյալ տարի կենտրոնն ընդունել է 147 երեխայի, 37 նոր երեխա գրանցվել է հաջորդ տարվա համար: Կենտրոնի նպատակն է, որպեսզի երեխաները հաճախեն և՛ կենտրոն, և՛ դպրոց: Այժմ կենտրոնի սաների 58% հաճախում է նաև դպրոց: 28 երեխա գնաց դպրոց կենտրոն այցելելուց հետո, և 15 երեխայի արդեն հաջողվել է հաղթահարել խոսակցական խնդիրները: Կենտրոնի հիմնական նպատակն է կրկնապատկել այդ արդյունքը հաջորդ տարիների ընթացքում:

«Այո»-ն սկսում է ծայրահեղ անհրաժեշտության համար նախատեսված միջոցներ հավաքագրել Հրազդանի համար: Կենտրոնը ստիպված էր դադարեցնել իր գործունեությունը 2017թ-ի հունվարի 1-ից, և Հայ օգնության ֆոնդն սկսել է աջակցել կենտրոնին՝ տրամադրելով ֆինանսական օգնություն մոտակա երեք ամիսների համար, միչև մեզ կհաջողվի հավաքագրել ծրագրի համար նախատեսված ամբողջական գումարը:

Ավելին, ՀՕՖ-ը կկենտրոնացնի իր պրոֆեսիոնալիզմն ու ռեսուրսները, որպեսզի կենտրոնին տրամադրվեն անվճար դասընթացներ և մեթոդոլոգիական առաջնորդություն՝օգնելով կենտրոնին իրականացնել հանրային իրազեկության և դրամահավաքների արշավների միջոցառումներ: Այն նաև կօգնի կենտրոնանալ ծնողների հմտությունների զարգացման վրա և կզարգացնի ցանկացած պահանջվող այլ հմտություն: Այս ամենը ներդրումը կդարձնի ավելի շարունակական և արժեքավոր, քանի որ աջակցելով կենտրոնին ամրապնդել իր կարողությունները, մենք ապահովում ենք նաեւ ավելի մեծ արդյունք ապագայում:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ
1. ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1.1 Ծրագրի ղեկավար և իրավունքների պաշտպանության մասնագետ	12 ամիս	$2,620.00
1.2 Մոնիթորինգի համակարգող և սոցիալական աշխատող	12 ամիս	$2,125.00
1.3 Հաշվապահ	12 ամիս	$2,125.00
1.4 Հոգեբան	12 ամիս	$2,125.00
1.5 Համակարգչային մասնագետ	12 ամիս	$2,125.00
1.6 Հատուկ մանկավարժ	12 ամիս	$2,125.00
1.7 Լոգոպեդ	12 ամիս	$2,125.00
1.8 Երաժշտության մասնագետ	12 ամիս	$2,125.00
1.9 Ձեռագործության մասնագետ	12 ամիս	$2,125.00
1.10 Նկարչության մասնագետ	12 ամիս	$2,125.00
1.11 Ֆիզիոթերապիստ	12 ամիս	$2,125.00
ԸՆԴԱՄԵՆԸ		**$23,870.00**
2. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ		
2.1 Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված տրանսպորտ	12 ամիս	$2,400.00
ԸՆԴԱՄԵՆԸ		**$2,400.00**
3. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ԾԱԽՍԵՐ		
3.1 Հեռախոս		$240.00
3.2 Ջեռուցում	12 ամիս	$1,290.00
3.3 Ինտերնետ	6 ամիս	$264.00
3.4 Էլեկտրաէներգիա	12 ամիս	$240.00
ԸՆԴԱՄԵՆԸ	12 ամիս	**$2,034.00**
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		**$28,304.00**

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **28,304**